ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 14

10 փետրվարի 2014 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետով, ինչպես նաև <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով ***որոշում եմ***

1. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 3, դաս 3 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածի 609.7 թիվը փոխարինել 459.7 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 1, դաս 1 (աղբահանում) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի 0 (զրո) թիվը փոխարինել 150.0 թվով, 4264 (տրանսպորտային նյութեր) հոդվածի 1-ին եռամսյակի 1200.0 թիվը փոխարինել 1500.0 թվով:
3. Համապատասխանաբար բյուջեի վարչական մասի 7136 հոդվածի (գույքահարկ փոխադրամիջոցներից) 1-ին եռամսյակի 1500.0 թիվը փոխարինել 1800.0 թվով:
4. Գլխավոր մասնագետ հաշվապահ Ա. Սաղաթելյանին.
   Նախահաշիվների և ժամանակացույցների մեջ կատարել նշված փոփոխությունները:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 15

11 փետրվարի 2014 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱԲՐԱՀԱՄ ԳԵՎՈՐԳԻ ԱՊԻԿՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Շիրակացի փողոց N 25 հասցեի բնակիչ Աբրահամ Գևորգի Ապիկյանի 0.02.2014 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարալիկ քաղաքի Շիրակացի փողոց 25ա հասցեի հողամասում 1985թ. կառուցվել է պահեստարան և 1981թ մառան, 1999 թվականին՝ բնակելի տանը կից կառույց, սակայն իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի դրույթներով ***որոշում եմ***

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Աբրահամ Գևորգի Ապիկյանի /ծնված 28.02.1956թ./ ք. Մարալիկ, Շիրակացի փողոց, N 25ա հասցեում գտնվող հողամասում 1985թ. կառուցված պահեստարանի և 1981թ մառանի, 1999 թվականի բնակելի տանը կից կառույցի գույքային իրավունքները վերականգնել և ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցում կատարելու նպատակով:
3. Ուժը կորցրած ճանաչել Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետի 01 փետրվարի 2014 թվականի N 10 որոշումը:

Քաղաքապետ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ